



ԺԵ ՏԱՐԻ, ԹԻՒ 7

1860

ՑՈՒԼԻՑ 1

Առաքինի ու Քաղաքակիրր պատաճի : (Տես երես 461)

ԼԵ

Իրաւունք և պարտք ազատութեան :

Ձեւ որ մարդս պարտըկան է ինքզինքը պահպանելու և կատարելագործելու, պէտք է որ ազատութիւն ալ ունենայ իրեն պահպանութեանն և կատարելագործուելուն համար հարկաւոր եղած բաներն ընելու . բայց աղեկ հասկընք . ազատութիւն ըսելով ոչ թէ ամէն խելքերնիս փշածն ընել կ'իմանանք, այլ ինչ որ պէտք է զայն ընել, անանկ որ ոչ ոք պիտի կարենայ արգելք ըլլալ մեր ունեցած կարողութիւնները իրենց վախճանին ծառայեցընել ուզածնուս պէս : Ո՞ւ կը ուրիշին գործոյը ան ատեն միայն կրնայ արգելք ըլլալ՝ երբոր հաւասարութեան դէմելան :

Պատաճնեկութեան միջոյնիս գեռչենք ձանջնար թէ որ բանն օգտակար է և որը վնասակար . ասոր համար ծնողը

նիս և վարժապետները մեզի կը հրամայեն՝ թէ աս ըրէ, ան մի ըներ : Եշր կը մեծնանք՝ կամքերնիս, կիրքերնիս, մեր շահը կամ տգիտութիւնը զմեզ չար գործքեր ընելու կը յորդորեն և ուրիշներուն վնասելու . ասոր համար օրէնքներ կան որ կը հրամայեն մեզի ընելիքնիս, որոնք նաև կը ստիպեն զմեզ բռնութեամբ և պատժօք . ասիկայ մեր ազատութիւնը չմերցըներ, այլ մանաւանդ թէ կ'ապահովցընէ :

Ինթաղրենք որ ես ամէն ուզածս ու ախորժածս կարենամ ընել . ուրիշներն ալ նոյնպէս կարենային ընել . իրենց ըստ կամն հաճոյքը իմ ազատութեանս արգելք կ'ըլլար, որով միշտ կուռոյ և ուզածնիս պաշտպանելու վիճակի մը մէջ պիտի ըլլայինք :

Հայտնապէս ուրիշներուն ազատութեանը կը վնասեմերք զիրենք կը ստիպեմ որ չուզած բաներնին ընեն, երբ կը պահանջեմ որ ինծի պէս մտածեն, երբ կը ծաղրեմիրենց գործունեութիւնու փութաջանութիւնը, երբ արգելք

կ'ըլլամիրենց կոչմանը, երբ չարասըր-
տութեամբ կը պախարակեմ իրենց ը-
րածը, երբ իրենց անմեղ գործողու-
թեանցն ացք կը տնկեմ ու կը խափա-
նեմ։ Ավ վնասեմ իմ ազատութեանս՝
երբ առանց լաւ մտածելու պարտքեր
վրաս կ'առնեմ, երբ անհոգ կ'ըլլամ
այնպիսի վիճակ մը ընտրելու՝ որ կարելի
եղածին չափ անկախ ըլլամուրիշներէն,
երբ պարտքի տակ մտնելով իմ ազա-
տութիւնս կը կորսընցնեմ, երբ անիրաւ
գործողութիւններ ընելով՝ ուրիշները
կը ստիպեմոր զիս սանձեն։

Արկին կրկին մտածէ ու ինծի պէս
կը տեսնաս՝ որ աղատ ըլլալու միակ մի-
ջոցն է առաքինի ու քաղաքակիրթ ըլ-
լալը։ վասն զի առաքինութիւնը ստոյգ
չարիքներէ փախցիլ կը սովլեցընէ, և
կ'ազատէ յայտնի բռնաւորներու ձեռ-
քէն՝ ինչպէս են ախտերն ու կիրքերը։

Լ.9

**Իրաւունք և պարտք պաշտպանու-
թեան։**

Տայց թնչ բանի կու դային իրա-
ւունքներս թէ որ չկարենայի պաշտպա-
նել ընդդէմ անոնց, որոնք իմ իրա-
ւանցս գէմկ'ելլեն։ ուրեմն ունիմկա-
րողութիւն իմ կեանքս, ազատութիւն,
պատիւս, ստացուածքս, ընտանիքս և
ընկերութիւնը պաշտպանելու։

Խնդիրնքդ պաշտպանելու առաջին
չնարքն է՝ փախցիլ այն ամէն բաներէ
որոնք քեզի վնաս մը կը բերեն։ թէ որ
ուիւթական բան մը կամ կենդանի մը
ինծի վնասէ՝ կը սամ որ և իցէ կերպով
անկէ ազատիլ, ինչուան զինքը փայցը-
նելով։ իսկ թէ որ մարդիկ ինծի չարիք
մը ուզենան հասցընել, պէտք է որ բո-
լոր մտաց և մարմնոյ ուժովս իրենց գէմ
կենամ, բայց այնչափ միայն՝ որչափ իմ
ապահովութեանս համար չարկաւոր
է։ Ու որ գող մը վրաս յարձեկի, և
ես թէ որ կոռւելով կամ օգնութիւն
կանչելով կը սամ յաղթել իրեն՝ ու ընդ-
չափառակն կը սպաննեմ՝ յանցաւոր եմ։

Ուրիշէ մը նախատուելով կատղե-
ցար, բայց թնչ շահ եղաւ քեզի։ բար-
կութիւնը զքեզ աւելի կը խոռվէ, և
ոչ միայն այն ըրածովդ կրած նախա-
տինքդ չըրեցաւ՝ այլ թերեւս անիրա-
ւեցար բանիւք և գործովք։ Չարի չար
հատուցանելը մեղք է։ լաւագոյն վրէժ-
ինդրութիւնը ներեն է։ Դրիգորը,
Կերսեսէն նախատուելով ներեց անոր
ու փոխադարձ բարերարութիւն ալ ը-
նելով, Աղէէ հնարքը գոայ, է՛լուր, երբ
վրէժինդրութիւնը չնել է մասնէի՝ է չը-
նէի որ նոր չարէ ճը գլուխ չգոայ։ Գիշերը
դուռս չէր տանէր ու ամբողջ օրը անոր է է
հնարքներ է մասնէի։ Երբոր հաշուեցաց,
ամէնուը վրաս առաջէնի ու ժաղանակիրն մար-
դու ճը համար մոռնունք առին։ Ներսէն ալ
չաս ճը չհասուաց, և ո՛ գիտէ նէ զինուը
գրգուելով ինչը չէր իրար չնել։ Վերջապէս
իմացաւ որ ամէնելին իրաւունք չունէր։ Ե-
հաւ ինձի նողութիւն ինդրէց ու նորէն
բարեկամանիւ։

Ավ որ ուրիշի զրկանք մը ըրեր է
պէտք է որ վնասուն փոխարինէ, անի-
րաւութեամբ առածը ետ դարձնէ,
նախատանաց հատուցումն ընէ և տը-
ւած գայթակղութիւններն ուղղէ։ բայց
հատուցումն պահանջելու համար հարկ
չկայ բռնութիւն ձեռք առնել։ կոռւ-
փով՝ բան մը չտկուիր։ տեսե՞ր ես ար-
դեօք որ կոտրած դարան մը գաւազանի
հարուածով նորոգեն։ չէ։ պէտք է որ
կտորուանկները մէկմէկու քով դնես,
սոսինձով կացընես ու նորոգես։ այսպէս
ալ մէկը որ իր իրաւունքը նախատին-
քով ու կոռւով կ'ուզէ պաշտպանել, ի-
րեն աւելի կը վնասէ։ Դրացիդ քեզի
անիրաւութիւն մը ըրաւ, ջանա քու ի-
րաւունքդ խօսքով անոր հասկըցընես։
ո՛ գիտէ, թերեւս իրարու խօսքը կրնաք
հասկընալ։ բայց նայէ որ խօսուածքդ
քաղցը ու պատճառներդ զօրաւոր ըլ-
լան։ Ու որ չկարենաք միաբանիլ, ա-
հաւասիկ արդարութեան ատեանները
կեցեր են, բայց անոնց միայն յուսահատ
գէպերու մէջ դիմեցէք, ամենազօրա-

ւոր դեղերու պէս որոնք միայն ամէն հնարք պարապ ելլելէն վերջը կը գործ ածուին : Դատաստանը երկու կողմին ալ կործանման պատճառ կ'ըլլայ , և շատ անգամ յաղթողն ալ անբաւ ծախք ընելէն ետքը բան մը չլաստըկիր :

Ի՞նգամ մը երկու ձենորս խեցի մը գտնելով ծովեզերքը սկսան կռուիլթէ որուն կ'իյնայ խեցին . լաւ մը կռուելէն ու կանչելէն ետքը ելան դատաւորին գնացին . դատաւորը ծանրութեամք մը ձեռքն առնելով բացաւ ոստրէն ու մէջինը ուտելէն ետքը պատեանին մէկը մէկուն , միւսը մէկալին տուաւ : Ի՞ս առակը մտքելնիդ պահեցէք , և ասով թերևս շատ ծախքերու մոմտուքներէ ազատ կ'ըլլաք : Դարձեալ մտքերնիդ լաւ դրէք որ մարդուս իր իրաւունքները յարգել տալու լաւագոյն կերպը , ու բիշներուն իրաւունքը յարգելու մեծարելն է :

ԱՅ

Իրաւունք և պարտք ձշմարտորեան :

Ի՞նչ կ'ըլլաք աշխարհք թէ որ մարդիկ տարբեր բան մտածէին ու տարբեր բան խօսէին . թէ որ այոին տեղ չէն փոխանակէին , թէ որ իրենց տըւած խոստմունքները չպահէին . բնաւ մէկը բան մը չէր հասկընար , ոչ ոք ուրիշն վրայ կրնար վստահանալ , և մեր խօսելու զարմանալի գործիքը լեզուն՝ զոր մէկմէկու հետ միաբանելու և մէկմէկու օգնելու համար առած ենք Ի՞ստուծմէ , ընդունայն՝ մանաւանդ թէ վնասակար ալ կ'ըլլաք : Ի՞այց ինչպէս իրաւունք ունինք մեր բարեկեցութեան փոյթ ունենալու և զմեզ կատարելագործելու , ասանկ ալ նաև իրաւունք ունինք ձշմարտութիւնը գիտնալու , և պարտըկան ենք ձշմարիտը զուրցելու :

Դըրէք սուտ շխօսիս , ով պատանեակ . արհեստակեալ բառերով մի կեղծեր ձշմարիտը , բառերուն տարբեր իմաստ տալով . և ըլլայ թէ ձշմարտութենէ գուրցելու , ասանկ ալ նաև իրաւունք ունինք ձշմարիտը զուրցելու :

Նես քու կերպերովդ : Ի՞սկէ աւելի ինչ լաւ գովեստ կրնայ ըլլալ՝ երբոր մէկու մը համար ըսեն . Անհեղ հարդ է , ու խօսէլ բանող : Ի՞այց ով որ սուտ կը խօսի յայտնի կը ցուցընէ որ չար միտք մը ունի , կամ ծածուկ ախտ մը որով կ'ամբընայ ձշմարիտը ըսելու : Ի՞սոր համար կ'ըսուի թէ սուտ խօսիլը անխելքներուն համար աղէկ զէնք մըն է . թէ պէտ և շուտ մը կը մատնուին , վասն զի սուտին սրունքները կարծ են , և ան ատեն ինչ ամօթ է մարդուս ստախոս գտնուիլը :

Դարձեալ մի ըսեր ինծի թէ՝ Սուր Տը խօսեցայ՝ բայց նենեւ բան հըն էր , և բնաւ մէկու հը չնա չէր բերէր , նաևառանդ նէ զիս ալ զութիշներն ալ չարէտէ հը կ'աղառէր : Այսոյդ չարիք մըն է սուտ խօսիլը , և անստոյդ անկէ առաջ գալու բարիքը . բարիք կ'ելլէ ասկէ ըսելով՝ չարիք գործել չըլլաք . թեթե սուտ մը աւելի մեծերուն դուռ կը բանայ . թէ որ դուն լաւ կարծելով սուտ խօսեցար , նոյնպէս ուրիշներն ալ մտքերնին աս բանս կամ ան բանը լաւ գնելով , կը սկսին անխիղչ սուտ խօսիլ . և այսպէս մարդկային ընկերութեան մէջ վստահութիւնը նուազելով , ընկերութիւնն ալ կը նուազէր :

Խօսքով եղած սուտերէն գուրս ըզգացման սուտեր ալ կ'ըլլան , երբ սրտերնիս չեղածը արտաքուստ կը կեղծենք : Կեղծաւորը ջերմեռանդութիւն կը ձեւացընէ , մինչդեռ ինքը գէշ մարդ մըն է . խաբեթան առաքինութիւն կը ձեւացընէ ու կը ջանայ զքեզ մոլորեցընել . չողքորթը բարեկամկը ձեանայ և ախտերդ ալ կը գովէ . զգուշացիր շողքորթներէն . վայրէնի գաղաններուն մէջ ամենէն վնասակարը՝ չարախօսն է . իսկ ընտանի գաղաններուն մէջ՝ շողքորթը :

ԱՅ

Իւհէ յունիտ . — Ի՞այց պէտք է գիտնալ որ անկեղծութիւնը չպարտաւորեր զմեզ ամէն բան զուրցելու . ամէն ձըմարտութիւն ըսելը աղէկ չէ : Կեղծաւ

ւորիլը չեղած բանը ըսելէ . իսկ չփիտ նալու զարնելը եղածը լոելէ . կեղծաւորիլը երբեք օրինաւոր չէ . իսկ չփիտցող ձեանալը երբեմն պարտք է ու մարդավարութիւն : Այս որ շիլ մը կամ տպեղ ու զազրատեսիլ մարդ մը տեսնես և երեսին մէկէն զարնես իր պակասութիւնը , ասիկայ չէ թէ անկեղծութիւն այլ կոպտութիւն ու տմարդութիւն է : Իսենք թէ մօր մը միակ որդին սպաննուեր է . թէ որ գուն մէկէն վազես ու ըսես՝ իրեն ալ մեռնելուն պատճառ կ'ըլլաս : Դարձեալ շահաւոր բան մը մտածեր ես , թէ որ երթաս դրացիիդ պատմես ինքը քեզմէ առաջ կը վազէ և քու շահուդ արգելք կ'ըլլայ :

Ենիեղծութիւնը պէտք է որ խոհեմութեամբ չափաւորուի , և ասիկայ կը սովորեցընէ մեզի չըսել այն բանը որ անօգուտ և կամ մեր գործոցը վնասակար կրնայ ըլլալ . դարձեալ զգուշանալու է չըսել այն Ճշմարտութիւնը՝ երբ վնասակար կրնայ ըլլալ մեր եղեարցը , առանց ընդհանուր ընկերութեան օգուտ մը բերելու : Դայց թէ որ ըսես անանկ բան մը ուսկից ուրիշն վնաս մը կրնայ ծագիլ , գէշ կ'ընես : Այս գիտնայիր որ դրացիիդ շունը կատղեր է , կամ թէ ծառան գողէ , կամ վաճառական մը զինքը կը խարէ , չէիր իմասցընէր իրեն . ևս առաւել երբ գիտնայիր որ գէշ ընկերներ իր որդիքը կը մոլորեցընէն : Ըստ աւելի պէտք է որ անկեղծ ըլլաս երբ իբրև վկայ դատաստանի առջե կը կոչուիս : Այդ անոր որ անմեղը կ'ամբաստանէ . բայց ոչ ինչ նուազ անզգամ է ով որ կ'ուզէ եղեանաւոր մը խալըսել . ինչ յանցանք որ նոյն անձը վերջէն ընել՝ ամենուն ալ ինքը պարտական է :

Դայց ասով պէտք չէ որ մէկու մը վրայ տեսած կամ գիտցած գէշութիւդ ուրիշներուն պատմես . չարախոսն անիրաւութեամբ կը մեղանէ , երբ ուրիշի չըրած բաները կը պատմէ , կոռուց ու անսիրելութեանց պատճառ կ'ըլլայ . ուստի ընկերութեան մէջ իբրև ժամատափեակու այս անկարութիւններով որ գաշինքը կը դրուի՝ կ'ըստի պայման :

Խօսք մը գիտես թէ ինչ հետևանքներ կ'ունենայ . լեռնէն վար գլորտըկուածքարին կը նմանի որ չես գիտեր թէ ուր կրնայ հանգչիլ : Ով որ շուտ կը խօսի շատ բան կ'ունենայ ցաւելու :

Վարժեցուր զքեզ նաև լոելու . շատ բան գիտէ ով որ լոել գիտէ : Ի՞սակն ալ կ'ըսէ , թէ Ով որ կ'ուզէ խաղաղութեամբ ապրիլ , կը տեսնայ , կը լսէ ու կը լոէ : Ո՞րչափ կասկածելի են միշտ նոր բաներ պատմողները որ ուրիշներուն ըրածները կը դիտեն , նամակներ կը բանան , թղթեր կը կարդան և մէկուն մէկալին կը պատմեն : Ի՞ստուած պահէ զմեզ այսպիսի մարդկանցմէ : Եւս առաւել երբ ուրիշ մը իրեն գաղտնիքը քեզի վստահացած է՝ չըլլայ որ բնաւ մէկու մը ըսես :

Դայց մեր նմանեացը պատույն ու առաքինութեանն օգտակար եղող յայտնի գիպուածներու մէջ , առանց մարդկային նկատմանց համարձակութեամբ պէտք է խօսինք : Իրաւունք ունեցողը վերջապէս իր իրաւունքը ձեռք կը ձգէ : Ի՞ստքեալք և մարգարէք Ճշմարտութիւնը կը քարոզէին , թէ պէտ և գիտէին որ զիրենք պիտի սպաննեն :

ՀՅ

Դայցն . — Շմարտախօսութիւնը հիմն է խօստմանց և գաշանց : Խսոսունն կ'ըսուի ան՝ երբ կը յայտնեմ որ կ'ուզէմ աս բանս լրել կաման բանը տալ . խօս ինչ կերպով որ այս խօստմանքը կը բացարուի , կը կոչուի դայցն , եթէ ըլլայ բանիւ կամ զրով . խօս ինչ թէութիւններով որ գաշինքը կը դրուի՝ կ'ըստի պայման :

Դա կը խօստանամ որ ժամացոյց մը քեզի տամ . ասիկայ կ'ըսուի պարգև : Կը խօստանամ գարձեալ որ տրցակ մը զրիչ կու տամ քեզի , թէ որ գուն զմելին մը տաս ինծի . ասիկայ ալ է դոխանակութիւն : Կը խօստանամ գարձեալ որ գաշտս քեզի մշակելու թողում , տունն քեզի բնակութեան տամ , ձիս կամ նաւակու ալ ու զածիդ պէտ Ճամբորդու-

թիւն ընելու քեզի յանձնեմ, այսու պայմանաւ որ դաշտին պտղցն կեսը, կամայսչափ բան մը ամէն օր կամաւրուան մէջ տաս ինծի. ասիկայ ալ չարչէ կ'ըսուի : Ես քեզի քսան կանգուն տեսակ մը չուխայ կը խոստանամ տալ, թէ որ 15 ֆրանք վճարես ամէն մէկ կանգունին . ասիկայ ալ է հաճառէլ :

Դիրք մը կու տամ որպէս զի կարդալէդ վերջը նորէն ինծի դարձընես . աս ալ է ի՞սկ : Ը ատ անգամ փոխ տակ կու տանք մէկմէկու . դուն որ կ'առնես՝ վրայ կը դնես ու կը շահիս, և ես որ փոխ տուած եմ քեզի ան ստակը՝ չեմ կրնար զայն ուրիշ բանի գործածել . ուրեմն իրաւացի է որ դուն վարձք մը տաս ինծի որ կը կոչուի շահ : Ո՞ւ որ ես ուրուն որ փոխ կու տամ վրան վստահութիւն չունիմ, ապահովութեան համար բան մը գրաւ կ'առնում, կամ թէ որ ստացուածք ունի՝ տէրութեան արձանագրութեանց մէջ իմ տուած փոխս իրեն ստացուածքներէն մէկուն դիմացը կը նշանեմ որն որ կ'ըսուի գրատիտն . կամ երաշտառը մը կը գտնամ, որ եթէ պարտատէրը խաբէ զիս ինքը վճարէ :

Երբեմն այլ և այլ տեսակ ծառայութեանց համար ալ դաշինքներ կը դրուին . Դուն ծառայ եղիր ինծի՝ ես քեզի նորակ կու տամ . վարժապետիս իրաւացէն մը կու տամ որպէս զի ինծի ամենամեծ բարիք մը ընէ, այսինքն ուսմունք սովորեցընէ : Պաշտօնեայն ալ թոշակ կ'առնու որպէս զի առանձին ինսամօք հասարակաց բարւոյն համար աշխատի . ինչպէս զինուորն ալ հասարակաց խաղաղութիւնն ապահովցընելու համար :

Խ

Հասարաբիութիւն՝ ՚ի խոսքմունս . — Խոստմունք մը տալէն, դաշինք մը հաստատելէն ետքը պէտք չէ անոնցմէ պակասիլ : Ես բանիս հիմակուընէ զձեզ վարժեցուցէք, ովք պատանեակք, հաւատարիմ ըլլալով ամենէն ջնջին բաներու մէջ ալ : Երէկ աշկերտ մը իր դա-

սընկերին խոստացաւ որ եթէ իրեն բոկեղ՝ մը տայ, այսօր ինքը իննձոր մը կու տայ իրեն . բայց այսօր չուզեց տալ . ուստի կանչեցի զինքը ու նայէ, ըսի, թեթև բան մըն է ըրածդ, բայց մուածէ մէյմը թէ ինչ գէշ հետևանքներ ունի :

Ա. Ատախոս ես ու խօսքիդ վրայ չկեցող, ուստի ուրիշ անգամ ընկերդ քեզի ասանկ շնորհք մը ամենելին շըներ : Բ. Ծնկերներուգ մէջ խարողի անտւն պիտի ունենաս : Գ. Երբոր մեծնաս՝ վրադ գէշ համարմունք ունենալով, ամենէն կարեւոր բաներու մէջ ալ պիտի չվստահին վրագ : Դ. Ծմէն բան քայլ առ քայլ առաջ կ'երթայ . այսօր խիզչ չես ըներ իննձորի մը համար զուրիշը խաբել, վաղը կրնաս մեծ գումարի մը մէջ ուրիշները նենդել և այսպէս անգամ մը կը դառնաս : Ե. Ծմէն մեղք իր պատիմն ալ հետը ունի . Եթէ այսօր զքեզ իրբեւ ստախոս մսքեր նին դնեն, վաղը եթէ իրաւ ալ խօսիս նորէն չեն հաւատար . չեմ պատմած քեզի այն պղտիկ հավուին պատմութիւնը որ Պայշն եկաւ, գայլը եկաւ պոռալով կը զուարձանար, որպէս զի ուրիշները իրեն օգնութեան վազեն ու ինքն անոնց վրայ ծիծաղի : Ծնգամ մըն ալ երբոր իրաւցընէ գայլն եկեր եր սկսաւ ուրիշ անգամներուն պէս պոռալով ուրիշները օգնութեան կանչել . բայց անոնք կարծելով թէ նորէն վրանին ինստալու համար է ըրածը, տեղերնէն չարժեցան և գայլը բոլոր հօտը աւրեց ու փճացուց :

Իստ կամ զրած դաշինքներդ ալ պարտըկան ես պահելու . խոստացեր ես պատկեր մը, գիրք մը, կամ պտուղ մը ընծայ տալ բարեկամիդ, թէ որ չկատարես, սուտ ըսած կ'ըլլաս : Պաշտօն մը քեզի տրուեցաւ . կրնայիր հրաժարիլ, բայց յանձն առնելէդ ետքը պարտըկան ես ամէն բան տեղն ՚ի տեղը կատարելու : Պայց ինչ ըսեմ անոնց որ դաշինքը չպահելու համար, այլ և այլ

մնոտի պատճառներ առաջ կը բերեն . Գրությով լցուա . — Տերութեան ինդով լուսդա լորժածուեցա . — Վէայներ լցային : Այսնք պատճառ չեն . խոստացար , բաւական է . առաքինի ու քաղաքակիրթ մարդու մը համար թուղթը իր խօսքն է :

Ո՞իայն ազատ ես դաշինքդ պահելէն երբ բռնութեամբ կամխաբէութեամբ եղած ըլլայ : Խորոսին հինգհարիւր դահեկան խոստացար ոսկիէ ժամացոյցի մը համար . բայց կը տեսնես որ ոսկիի տեղ զառեկէ է եղեր , ան ատեն պարտըկան չես դաշինքդ պահելու : Լիրակոսը բերնէս խօսք առաւ որ ես հօրմէս ստակ գողնամ . թէպէտ և խօսք տուած ըլլամ , պարտաւորեալ չեմ աս մեղքը գործելու : Մարկոսը սուրը վիզս դրած խօսք առաւ ինձմէ որ այսչափ ստակ տամիրեն . հոս ալ դարձեալ պարտական չեմ տալու . վասն զի խոստմունքը իմազատ կամքովս չեղաւ :

Իայց ես հազարումէկ փորձերով տեսեր եմ որ կուոյ ու հակառակութենց զլխաւոր պատճառը դաշինք չպահելն է . ուստի եթէ կ'ուզէք հանգիստ ու խաղաղ կեանք մը անցընել , խոստմունքը տալէն առաջ լաւ մտածեցէք , որոշ ու յայտնի պայմաններ դրէք՝ մտքերնիդրերելով այն առակը որ կ'ըսէ .

Պայմանք պարզք և յայտնիք ,
| ինին բարեկամք սիրելիք :

ԽԱ.

Արպէս զի մարդիկ հաստատուն կենան իրենց խոստմանցը մէջ երդումը դրուած է . որ է ըսել՝ զԱստուած կէայ էը հանչէմ ըստածիս կամ խոստացածիս ճշմարդութեանը . նէ որ չղահէմ ու պահսիմ , ինչը դիս պատրոհասէ : Ուրեմն մէյմը կինայ երդնուլ մարդ ցուցընելու համար որ պարզ ճշմարտութիւն է ըսածը . երկրորդ բան մը գործելու համար :

Ո՞ի վարժեցընէք զձեզ , ով պատանեակք , դիւրաւ երդմունք ընելու :

Երդմունք ընողը ինքնիրեն կը խօստովանի որ իրեն պարզ խօսքը ամենեւին զօրութիւն մը չունի . վասն զի առաքի-

նի ու պատիւ ունեցող մարդու մը համար բաւական է կա ու չէ ըսելը : Խակերթոր երթեմն ծանր նիւթերու մէջ կը ստիպուիս երդմունք ընելու , նախ մէյմը ինչ որ պիտի խոստանաս լաւ մտածէ . վերջը աշքերդ վեր դէպ'ի երկինք բարձրացուր ու մտածէ թէ ով է լուտուած : Կանչեցիր զինքը 'ի վրէժիրն զրութիւն և լսեց . իսկ թէ որ պակսիս՝ ինքը զքեզ չիմունար :

Կը շարունակուի :

Միլտովն : (Տես երես 134)

Եյն միջոցին որ լուգղիա ահաւոր խոռվութենէ մը կը տագնապէր ու իր օրինաւոր թագաւորէն զրկուած՝ սարսափած չէր գիտէր որուն ծառայէ , Ո՞իլտովն ըստ իր բազմամեայ ըղձիցը ուզեց որ ամուսնանայ , բայց դժբազդաբար այս ամուսնութիւնս պատճառ եղաւ իրեն նորանոր խոռվութեանց . վասն զի իր կինը թագաւորականաց կողմի ընտանիքէ մը ըլլալով չկրցաւ իր ամուսնոյն հետ խաղաղ ապրիլ , մանաւանդ թէ օր օրուան վրայ իրալու դէմունեցած ատելութիւննին սաստկանալով վերջապէս մէկմէկէ բաժնուեցան : Շատ դառնացաւ Ո՞իլտովն այս գէպքիս վրայ՝ ու մէկէն իր կծու գրիչը սըրած ետեկէ ետե չորս պղտի գրուածքներ հանեց , որոնց մէջ կը ջանայ միշտ զինքը արդարացընել յանցանքը կնոջ վրայ ձգելով : Իայց Երիցական աղանդաւորները՝ որոնց ջերմ հետեւող էր Ո՞իլտովն՝ այս ըրածին վրայօք զինքը շատ պախարակեցին , որոնց դէմ զարացած թողուց զիրենք ու բոլորովին աղատականաց կողմն անցաւ , ու ալ անկէց վերջը ամէն տեսակ եկեղեցական ու աշխարհական իշխանութեանց դէմ զինեցաւ : Ակայն այս գէպքիս մէջ դարձեալ տեսնուեցաւ Ո՞իլտովնի վեհանձն ու մեծասիրտ ոգին՝ որ թէպէտ բնութեամբ խիստ ու կատաղի էր՝ սակայն ըստ տեղւոյն գիտէր նաև գթած